ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՎ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Հարավային Կորեայի Բուսան քաղաքում անցկացվող Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 10-րդ համաժողովի շրջանակներում, հոկտեմբերի 31-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն, ի թիվս բազմաթիվ հանդիպումների, հանդիպում ունեցավ նաեւ Հունգարիայի Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ Գուստավ եպիսկոպոս Բոլսկեի եւ Հունգարական Եկեղեցիների Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Վիլմոս Ֆիսչելի հետ:

Հանդիպման ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց Հունգարիայի իշխանությունների կողմից սպա Ռամիլ Սաֆարովի՝ Ադրբեջանին արտահանձնման խնդրին: Վեհափառ Հայրապետը, ցավով արձանագրելով, որ կատարվածը մեծապես սրվերել է հայ-հունգարական բարեկամությունը, նշեց, որ նման երեւույթներն անընդունելի են եւ իբրեւ ազգատեցության քարոզչություն համընդհանուր դատապարտության պետք է արժանանան:

Հունգարական եկեղեցիների ներկայացուցիչներն իրենց հերթին դատապարտեցին Հունգարիայի կառավարության կատարած քայլը:

Զրույցի ընթացքում Հունգարիայի եկեղեցիների պատվիրակությունը նաեւ իր աջակցությունը հայտնեց ԵՀԽ 10-րդ համաժողովում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի վերաբերյալ քննարկվող բանաձեւին եւ պատրաստակամություն հայտնեցին իրենց ամբողջական մասնակցությունն ու աջակցությունը բերելու տարելիցի առիթով Հայոց Եկեղեցու կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունեց Հունգարիայի ներկայացուցիչների պատրաստակամությունը՝ նրանց բերելով իր գնահատանքն ու օրհնությունը:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Նոյեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 14-րդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների եւ բազում ուխտավորների, կատարվեց Հայրապետական մաղթանք:

Մաղթանքի հանդիսավոր արարողությունը կատարվեց Ս. Պատարագի ավարտից

հեղու Իջման Ս. Սեղանի առջեւ՝ հանդիսապետությամբ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի:

Մինչ մաղթանքը, պատարագիչ Սրբազան Հայրը՝ Մայր Աթոռի Վարչապետական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը, շնորհավորական խոսք ասաց ազգընտիր Վեհափառ Հայրապետի գահակալության 14-ամյակի կապակցությամբ: «Այսօր, սիրելիներ, այստեղ ենք, որպեսզի ցնծությամբ եւ ուրախությամբ խնդրենք Աստծուն, որպեսզի Նա իր օրհնությունն անպակաս դարձնի հայ հավատացյալից եւ ընդհանրապես Հայ Եկեղեցին կազմող յուրաքանչյուր հայորդուց, եւ առավել եւս այստեղ ենք, որ աղոթք բարձրացնենք մեր Հայրապետության համար եւ մեր աղոթքներով խնդրենք, որպեսզի Աստված բազում քաջառողջ եւ երկար տարիներ պարգեւի Ամենայն Հայոց Հայրապետին», - մասնավոր կերպով նշեց Մուշեղ Սրբազանն իր քարոզում:

Խոսքի վերջում Սրբազանը հայցեց Բարձրյալից՝ ուժ եւ եռանդ պարգեւել Հայոց Եկեղեցու բոլոր սպասավորներին՝ գլխավորությամբ համայն հայության հոգեւոր Հոր՝ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի:

Այնուհետեւ, Հայրապետական մաղթանքի ընթացքում, ծնրադիր աղոթքներով, սաղմոսներով ու շարականներով եկեղեցականաց դասն ուխտավորների աղոթակցությամբ անսասանություն մաղթեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ արդյունաշատ գահակալություն՝ Հայոց Հովվապետին:

ԲՈՒՍԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Հարավային Կորեայի Բուսան քաղաքում շարունակվում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 10-րդ համաժողովը, որին մասնակցում է Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակությունը:

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռի պատվիրակությունը ներկա գտնվեց Ղպտի եւ Հույն եկեղեցիներում կատարվող Սուրբ եւ Անմահ Պատարագին:

Հընթացս Ղպտի ուղղափառ եկեղեցում մատուցված սրբազան պատարագի՝ մասնավոր հիշատակության արժանացավ եւ տոնախմբվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 14-րդ տարեդարձը:

Այս առիթով Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Թաուադրոս Պատրիարքի կողմից Հայ Եկեղեցու պատվիրակությանը փոխանցվեց Սուրբ Դամիեթիե վանքից բերված երկու սրբապատկեր:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության, ինչպես նաեւ Վեհափառ Հայրապետի եւ Հայ Եկեղեցու համար կատարված աղոթքի կապակցությամբ՝ Հայ Եկեղեցու պատվիրակությունը Ղպտի Եկեղեցու ներկայացուցիչներին Վեհափառ Հայրապետի անունից հանձնեց Ս. Էջմիածնի զարդաքանդակ՝ փոխանցելու Թաուադրոս Պատրիարքին:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՀԽ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Հարաւային Կորեայի Բուսան քաղաքում ընթացող Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 10-րդ համաժողովին քննարկվեցին եւ որդեգրվեցին մի շարք բանաձեւեր:

Նոյեմբերի 6-ի նիստում «Դեպրեսիաւորուկ ժողովուրդների իրաւունքի մասին» հայտարարության քննարկման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակության կողմից բարձրացվեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրաւունքի պաշտպանության հարցը: Պատվիրակությունը կոչ արեց ԵՀԽ-ին դատապարտելու այս հարցի առնչությամբ աշխարհում կիրառվող երկակի չափանիշները:

Նույն օրը համաժողովի՝ շուրջ 345 եկեղեցիների 3000 պատվիրակներն Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով ընդունեցին հատուկ բանաձեւը, որն արդյունքն էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի պաշտոնական դիմումների, ինչպես նաեւ ԵՀԽ Կենտրոնական կոմիտեում Հայ Եկեղեցու նվիրակների հետեւողական աշխատանքի:

Նշյալ բանաձեւով որոշվեց՝

1. 2015 թ. ապրիլի 24-ի շրջանին Ժնեւում կազմակերպել միջազգային կոնֆերանս Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ եկեղեցիների, միջազգային զանազան կազմակերպությունների, իրավաբանների, իրավապաշտպանների մասնակցությամբ:

2. Սույն միջազգային կոնֆերանսին զուգընթաց կազմակերպել միջեկեղեցական աղոթք Ժնեւի Մայր տաճարում:

3. Միջազգային կոնֆերանսի օրերին հրավեր ուղղել աշխարհի բոլոր Եկեղեցիներին՝ աղոթելու հայոց նահատակների համար:

Բանաձեւը, որ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ վերահաստատեց 1983 թ. ընդունած ԵՀԽ դիրքորոշումը, նշանակալի ձեռքբերում էր Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում:

Նոյեմբերի 6-ի նիստերից մեկում տեղի ունեցավ նաեւ ԵՀԽ Կենտրոնական կոմիտեի ընտրությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսության երկու պատվիրակներ՝ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը եւ Փոլա Տեր-Մաթոյանը, վերընտրվեցին ԵՀԽ Կենտրոնական կոմիտեի անդամ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նոյեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին Հարաւային Կորեա կատարած իր այցից, ուր մասնակցում էր Բուսան քաղաքում անց-

կացվող Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարին: Վերադարձին Ամենայն Հայոց Հայրապետն այցելեց Չինաստան, մասնավորապես՝ Պեկին, Շանհայ, Քուանզու քաղաքներ, ինչպես նաև Հոնկոնգ՝ ծանոթանալու հայ համայնքային կյանքին եւ իր օրհնությունը փոխանցելու հայորդիներին:

Հոնկոնգում նոյեմբերի 9-ին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց «Հայ տուն» կենտրոնի բացման արարողությանը, որին ներկա էին տարածաշրջանի քաղաքներից ու տարբեր երկրներից ժամանած շուրջ 150 հայորդիներ: Ազգային ու հոգեւոր կյանքի կազմակերպման համար կենտրոնի սրահը Հոնկոնգի հայ համայնքին տրամադրել են տեր եւ տիկին Ջակ եւ Ջուլի Մաքսյանները:

Արարողության ընթացքում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու պատգամը բերեց հավաքված հայորդիներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Հայ տուն» կենտրոնի համար օծեց նաեւ Աստվածամոր սրբապատկեր եւ վեմ քար, որպեսզի կենտրոնում պարբերաբար Ս. Պատարագներ մատուցվեն՝ տեղի հայ համայնքի հոգեւոր կարիքների համար:

ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ Ս. ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նոյեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ, ուր նոյեմբերի 17-ին Մոսկվայի առաջնորդանիստ Ս. Պայծառակերպություն եկեղեցում տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողություն:

Հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նորակառույց տաճարում մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ, որի ավարտին Վեհափառ Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եւ «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ եւ օրհնության գրեր հանձնեց Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի 122 բարերարների՝ ի գնահատություն նրանց ազգօգուտ եւ եկեղեցաշեն գործունեության: Ս. Խորանից Հայրապետական Սրբատառ կոնդակներն ընթերցեց թեմական առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պարգեւների հանձնումից հետո ներկաներին Հայրապետական իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «...Այսօր ուրախություն է մեզ համար, որ մեր Եկեղեցու հավատավոր զավակներին արժանին մատուցեցինք եւ նրանց կուրծքը զարդարեցինք մեր Եկեղեցու բարձր պարգեւներով, քանզի իրենց արդար վաստակի արդյունքն ընծայաբերում են բարին արարելու, Հայրենիքը շենացնելու, Եկեղեցին պայծառացնելու նվիրական սուրբ գործի համար: Արդարեւ, շքեղաշուք այս կառույցը, աղոթքի այս տունը փառաբանություն է ինչպես մեր ազգի, նույնպես մեր բարերար զավակների համար», - նշեց Նորին Սրբությունը՝ գոհունակություն հայտնելով, որ այսօր մոսկվաբնակ հայորդիները հնա-

բավորություն ունեն փառահեղ Ս. Պայծառակերպություն եկեղեցու մեջ աղոթելու եւ մասնակցելու սրբազան արարողություններին:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում գնահատանքով հիշեց լուսահոգի Մուրադ Սարգսյանին եւ Մերուժան Լալայանին, ովքեր նույնպես ժամանակին իրենց կարեւոր մասնակցությունն էին բերել առաջնորդանիստ եկեղեցու շինարարական աշխատանքներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց նաեւ թեմական առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին՝ թեմի հոգեւոր կյանքի աշխուժացման եւ եկեղեցական համալիրի կառուցման համար:

Այնուհետեւ, այս ուրախալի առիթով եկեղեցական համալիրի սեղանատանը տեղի ունեցավ ցերեկույթ, որի ընթացքում գեղարվեստական կատարումներով հանդես եկան Մոսկվայի Հայորդյաց տան «Ռվսանանա» երգչախումբը՝ խմբավարությամբ Լենա Բեգլարյանի, «Ակունք» ժողովրդական գործիքների եւ «Կոչնակ» դհոլահարների խմբերը, ինչպես նաեւ «Հայասա» պարային համույթը եւ մանուկների պարային նորաստեղծ խումբը:

Հանդիսության ընթացքում բարերարներին գնահատանքի խոսք ասաց Եզրաս սրբազանը: «Հոգու ուրախություն է մեզ համար, որ եկեղեցասեր ոգին զորեղ է ձեզ պես հայորդիների սրտերում եւ ծնունդ է տալիս բարի իրագործումների, որի ականատեսն ենք այսօր մենք բոլորս», - ասաց Սրբազան հայրը՝ մաղթելով, որ Տիրոջ հովանավոր Աջը միշտ զորավիգ լինի նրանց՝ նույն եռանդով շարունակելու բարի գործերով շենացնել Մայր Եկեղեցին:

Երախտագիտության խոսքով հանդես եկան ազգային բարերարներ Ռուբեն Գրիգորյանը, Սամվել Կարապետյանը, նաեւ ելույթ ունեցան ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, եւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ Արթուր Չիլինգարովը:

Հանդիսության ավարտին ներկաներին վերստին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված Վանական խորհրդի նիստի ժամանակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծ ցավով անդրադարձավ Դամասկոսի Սուրբ Սարգիս եկեղեցուն կից գործող Ազգային Սրբոց Թարգմանչաց ճեմարանի մոտ նոյեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչական գործողությանը, որի հետեւանքով զոհվել են մարդիկ, այդ թվում երեխաներ:

Նորին Սրբությունը խստորեն դատապարտեց կրթական հաստատության հան-

Անա Քրիստինա Շիրինյանը Էօռնեկյան դպրոցում

Իսպանացի կաթոլիկ ուխտավորները Մայր Աթոռում

դեպ իրականացված հրեշավոր այս հանցագործությունը՝ անընդունելի նկատելով նաեւ այն, որ հակամարտության ընթացքում մասնավոր թիրախի տակ են առնվում քրիստոնեական համայնքները:

Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետը Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի միջոցով իր վշտակցությունն է հայտնել զոհերի ընտանիքներին ու հարազատներին՝ ընդգծելով, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը պիտի շարունակի իր զորակցությունը բերել սիրիահայությանը՝ հոգեւորականաց դասին եւ ողջ ժողովրդին:

Նոյեմբերի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ս. Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Դամասկոսի Սուրբ Սարգիս եկեղեցուն կից գործող Ազգային Սրբոց Թարգմանչաց ճեմարանի մոտ նոյեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչական գործողության հետեւանքով զոհված հայ երեխաների համար:

Մինչ հոգեհանգիստը հավուր պատշաճի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանը, որ սրտի մեծ ցավով ու կսկիծով անդրադարձավ մեկ շաբաթ առաջ Դամասկոսի Ազգային Սրբոց Թարգմանչաց ճեմարանում տեղի ունեցած ողբերգությանը: Սրբազան Հայրը խստագույնս դատապարտեց նմանօրինակ անմարդկային գործողությունները՝ նշելով, որ երեխաների սպանությունը գերագույն ոճիրն է, քանի որ վերջիններս անկախ իրենց կրոնական պատկանելությունից, պիտի վայելեն ամենքի խնամքն ու պաշտպանությունը:

Զոհվածների ծնողներին ու հարազատներին փոխանցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցությունները՝ Ոսկան Սրբազանը, հոգեւորականաց դասին ու ներկա բոլոր հավատացյալներին հրավիրեց անմեղ զոհերի հոգիների հանգստության համար կատարվելիք միասնական աղոթքի:

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ՝ «ԷՕՌՆԵԿՅԱՆ» ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԵՆՐԻՆ

Նոյեմբերի 21-ին «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամը «ՆՈԻՌ» (Նոր ուսումնական ռազմավարություն) ծրագրի շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօռնեկյան հանրակրթական դպրոցի» առաջին դասարանի աշակերտներին եւ նրանց դասվարներին համակարգիչներ բաժանեց: Ազգային բարերար Էդուարդո Էօռնեկյանի նախաձեռնած ծրագիրն արդեն երկրորդ տարին է, որ գործում է բարերարի անունը կրող հանրակրթական դպրոցում:

Միջոցառումը դպրոցի աշակերտների կողմից բացվեց Տերունական աղոթքով, ապա ՀՀ Օրհներգի ու «Էօռնեկյան հանրակրթական դպրոցի» հիմների կատարումներով: Ապա երախտագիտության խոսք ասաց դպրոցի տնօրեն Յուրի Ջիլավյանը: Պարոն Ջիլավյանը դպրոցի ուսումնական ծրագրի շրջանակներում նման նախաձեռնության

համար շնորհակալություն հայտնեց արգենտինահայ նշանավոր գործարար Էդուարդո Էօռնեկյանին եւ միջոցառմանը մասնակից նրա ներկայացուցիչներին՝ նշելով, որ ծրագիրը մեկ տարվա ընթացքում դրական արդյունքներ է գրանցել ուսումնական ընթացքի մեջ: Տնօրենը հույս հայտնեց, որ ծրագիրը կկարածվի նաեւ Հանրապետության այլ դպրոցներում:

Աշակերտներին, ծնողներին եւ ուսուցիչներին շնորհավորանքի խոսք ուղղեց «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն Անա Քրիստինա Շիրինյանը: Վերջինս ուրախությամբ արձանագրեց, որ նոր ծրագիրը նպաստում է ուսումնական գործընթացի առաջխաղացմանն ու որակի բարձրացմանը:
Այնուհետեւ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու գնահատանքը ծրագրի կազմակերպիչներին փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն եւ «Էօռնեկյան հանրակրթական դպրոցի» տեսուչ Տ. Վարդան վարդապետ Նավասարդյանը: Հայր Սուրբը, շնորհավորելով տարրական դասարանի աշակերտներին եւ ուսուցիչներին, երախտագիտություն հայտնեց բոլոր այն անձանց, որոնց ջանքերով ծրագիրը գործում է դպրոցում: Հայր Վարդանն իր խոսքում վստահություն հայտնեց, որ կրթության գործի իրականացման ճանապարհին համագործակցությունը եւ նման ծրագրերի իրականացումը գիտելիքներ ձեռք բերելու գործում կրթական յուրահատուկ հեղափոխություն պիտի դառնան աշակերտների համար՝ կրթելու եւ դաստիարակելու նրանց իբրեւ լավ քրիստոնյաներ ու արժանավոր հայորդիներ: Տեսուչը մասնավորապես նշեց, որ հարափոփոխ աշխարհի արագընթաց զարգացման մեջ հայ մանուկները եւ պատանիները պետք է համաքայլ ընթանան համաշխարհային նվաճումներին, որպեսզի իրենց որոշիչ դերակատարությունն ունենան քաղաքակրթության զարգացման եւ գիտության ասպարեզում: Հայր Վարդանը նաեւ ընդգծեց, որ այսօրինակ ծրագրերի իրականացումը կրթական օջախներում գիտելիք ձեռք բերելու անսպառ աղբյուր պիտի դառնա:

Հանդիսության ավարտին երգերի կատարումներով հանդես եկան «Էօռնեկյան հանրակրթական դպրոցի» աշակերտները, որից հետո Անա Քրիստինա Շիրինյանը XO համակարգիչներ ընծայաբերեց դպրոցի տարրական դասարանների աշակերտներին:

Միջոցառմանը ներկա էին նաեւ դպրոցի Հոգաբարձուների խորհրդի անդամներ, ուսուցիչներ եւ աշակերտների ծնողներ ու հյուրեր:

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑԱՄՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի 2013 թվականի հաղթողների մրցանակաբաշխութ-

յան հանդիսությունը: «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀՀ Կրթության ու գիտության նախարարության համագործակցության շրջանակներում իրականացվում է արդեն 10 տարի: Այն կազմակերպվում է Մայր Աթոռի բարերար ամերիկաբնակ Սիլվա Տեր-Ստեփանյանի հովանավորությամբ:

«Լավագույն ուսուցիչ» մրցույթը, որին մասնակցում են «Հայոց Եկեղեցու պատմություն», «Հայոց պատմություն», «Հայոց լեզու եւ գրականություն», «Բնագիտություն» (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) առարկաների ուսուցիչներ, ինչպես նաեւ տարրական դպրոցների դասավարներ, անցկացվում է ՀՀ բոլոր մարզերում եւ Երեւան քաղաքում՝ մարզային եւ հանրապետական փուլերով, որի արդյունքներն ամփոփվում են հանդիսավոր մրցանակաբաշխության ընթացքում:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան վարդապետ Նավասարդյանը: Հայր Վարդանը ողջունեց բոլորի ներկայությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ անդրադարձավ մրցույթի նպատակին՝ խրախուսելու ուսուցչի եւ մանկավարժի աշխատանքը հայոց զավակների կրթության եւ դաստիարակության ազգային գործում, հայտնաբերելու այն ուսուցիչներին, ովքեր արժանի են մեծարանքի եւ գնահատանքի իրենց մարդակերտման վեհ առաքելության գործի մեջ: Հայր Սուրբը նշեց նաեւ, որ Եկեղեցին նմանօրինակ միջոցառումներով ու ծրագրերի իրականացումով կարեւորում է ազգային-հոգեւոր առողջ գիտակցությամբ երեխաների կրթության եւ դաստիարակության գործը՝ այդ առաքելության մեջ սերմանելով հայրենիքի ու Մայր Եկեղեցու հանդեպ հավատարմության ու պատասխանատվության գիտակցություն:

Այնուհետեւ հանդիսության կազմակերպիչներին ու մասնակիցներին Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը եւ բարեմաղթանքները փոխանցեց Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը: Սրբազան Հայրն իր խոսքում նշեց, որ Հայոց Եկեղեցին մշտապես կարեւորել է կրթության նշանակությունը հայ ժողովրդի կյանքում՝ ընդգծելով, որ դարեր շարունակ հայոց վանքերը եղել են նաեւ դպրոցներ, մշակույթի ստեղծման եւ պահպանման կենտրոններ: Գեւորգ Սրբազանը երախտագիտություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ հայ ուսուցիչների հանդեպ ցուցաբերած հայրախնամ, բարի վերաբերմունքի համար, ապա շնորհակալություն հայտնեց նաեւ ՀՀ ԿԳ նախարարությանը՝ հատկապես վերջին տարիներին Հայ Եկեղեցու հետ համագործակցության ոգին խորացնելու եւ զարգացնելու համար:

ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի անունից ողջույնի եւ շնորհավորանքի խոսք ասաց ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը: Նա ուրախությամբ ընդգծեց, թե անցկացվող մրցույթը վկայությունն է այն կարեւոր հանգամանքի, որ դպրոցը բարի, հանդուրժող եւ մեծ գիտելիքներով զինված մանկավարժների ձեռքերում է: Իր խոսքում նա մեծապես կարեւորեց համագործակցությունը Հայ Առաքելական Եկեղեցու եւ ՀՀ ԿԳ նախարարության միջեւ, ինչպես նաեւ կրթության գործում

երեխաների հոգեւոր դաստիարակությունը: Շնորհավորելով ուսուցիչներին մրցանակաբաշխության առիթով՝ ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչության պետն արդյունավոր աշխատանք մաղթեց նրանց:

Հանդիսության առիթով ՀՀ ԱԺ Գիտության, կրթության եւ մշակույթի հանձնաժողովի անունից ուսուցիչներին շնորհավորեց ԱԺ պատգամավոր Կարինե Աճեմյանը՝ կարեւորելով ուսուցչի աշխատանքը գնահատող ու խրախուսող ամենամյա այս մրցույթը:

Այնուհետեւ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանն ու տիկին Նարինե Հովհաննիսյանը հաղթող ուսուցիչներին հանձնեցին մրցույթի մասնակցության վկայականներ, հոգեւոր գրականություն եւ դրամական պարգեւներ:

Առաջին մրցանակի արժանացան «Հայոց պատմություն» առարկայի ուսուցչուհի Ռիտա Բոյախչյանը (Երեւանի թիվ 62 ավագ դպրոց), «Հայոց լեզու եւ գրականություն» առարկայի ուսուցչուհի Նինել Սարգսյանը (ՀՀ Սյունիքի մարզ, Կապանի թիվ 2 ավագ դպրոց), «Ֆիզիկա» առարկայի ուսուցիչ Հրահատ Մուղդասյանը (ՀՀ Տավուշի մարզ, Բերդավանի միջնակարգ դպրոց) եւ Վանաձորի թիվ 1 դպրոցի դասվար Գայանե Թ-ամազյանը (ՀՀ Լոռու մարզ): Երկրորդ մրցանակ ստացան յոթ, իսկ երրորդ մրցանակ՝ տասնչորս ուսուցիչներ:

Միջոցառման ավարտին ազգային եւ հոգեւոր երգերի կատարումներով ելույթ ունեցան Արարատյան հայրապետական թեմի «Զանգակներ» (խմբավար՝ Շահե Քեշիշյան) եւ Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» Հայորդյաց տան (խմբավար՝ Հասմիկ Պողոսյան) երգչախմբերը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՍՊԱՆԱՑԻ ԿԱԹՈԼԻԿ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Նոյեմբերի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց իսպանացի կաթոլիկ ուխտավորների՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի Թագավորության պատվավոր հյուպատոս Արմինե Ադամյանի:

Հանդիպման սկզբում տիկին Ադամյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հյուրերին եւ նրանց այցելության նպատակը, այն է՝ խորապես ճանաչել Հայաստանը որպես հարուստ մշակույթ ունեցող հնագույն քրիստոնյա երկիր:

Ողջունելով ուխտավորների այցը համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը նրանց ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմությունը: Անդրադառնալով հայ ժողովրդի կյանքում Հայոց Եկեղեցու ունեցած առանձնահատուկ դերակատարությանը, Մայր Աթոռի քարոզչական գործունեությանն ու հոգեւոր-կրթական աշխատանքներին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց Եկեղեցու առաքելության կարեւորությունը հատկապես բազում մարտահրավերներով լի ներկա ժամանակաշրջանում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերություններին, հասարակության հոգեւոր կյանքին ու Հայոց ցեղասպանության ճամաչման եւ դատապարտման գործընթացին:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են մի շարք եկեղեցականների նոր նշանակումներ:

Մայր Աթոռի միաբաններ Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Ավագյանը եւ Հոգեշնորհ Տ. Պետրոս աբեղա Ազարյանը հոգեւոր ծառայության են նշանակվել Իրաքի հայոց թեմում:

Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը, ազատվելով Հայ Եկեղեցու Երիտասարդաց միավորման հոգեւոր պատասխանատուի պարտականություններից, ծառայության է կոչվել Շվեդիայի հայոց համայնքում՝ Կենտրոնական Եւրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական Պատվիրակության հայրապետական պատվիրակի պաշտոնակատարի իշխանության ներքո:

Հոգեշնորհ Տ. Կարապետ վարդապետ Հարությունյանն ազատվել է Գուգարաց թեմում ստանձնած պարտականություններից եւ ծառայության կոչվել Ֆրանսիայի Հայոց թեմում:

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՆՇԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Նոյեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Նշան աբեղա Պետրոսյանը (Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ): Տնօրինության համար հիմք է ծառայել Հայր Նշանի՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին դիմումը:

Կարգալույծ հռչակված եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքերը՝ Արմեն Պետրոսյան ավազանի անունով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

Մաքսյան Ժակ (Ինդկասպանի եւ Ծայրագույն Արեւելքի Հայրապետական պատվիրակություն)

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Արթուր Մելքոնյան (Գուգարաց թեմ)
Հովսեփ Մելքոնյան (Գուգարաց թեմ)
Արտակ Մելքոնյան (Գուգարաց թեմ)
Հովհաննես Միրիճյան (Արցախի թեմ)
Վարդան Ղազարյան (Արմավիրի թեմ)
Գարեգին ավ. քհն. Գասպարյան (ԱՄՆ Արեւելյան թեմ)
Ավստրիայի եկեղեցական համայնք (Կենտրոնական Եւրոպայի պատվիրակություն)
Արամայիս Քամալով (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գրիգոր Մելքոնյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ռուբեն Մուկիջանյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գարի Մարտիրոսյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արտյոմ Մելքոնյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Վրույր Գրիգորյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արտակ Մելքոնյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Վարուժան Սարգսյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Համլետ Միրզոյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ալեքսեյ Յուզբաշյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ալեքսեյ Ջուն (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)

ՍՈՎՀԱԽՕՍԱԿԱՆ

Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱՒ Տ. ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅ ԱՅՎԱԶԵԱՆԸ

Նոյեմբերի 6-ին 58 տարեկան հասակում վախճանվել է Մայր Աթոռի միաբան, Կոտայքի թեմի Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգեւոր հովիվ Հոգեշնորհ Տ. Սարգիս աբեղա Այվազյանը:

Հայր Սուրբի անժամանակ վախճանը մեծ ցավ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության համար:

Հայր Սարգիս աբեղա Այվազյանը ծնվել է Ախալքալակի շրջանի Ազավրեթ գյուղում 1955-ին:

1978 թ. ավարտել է ԵՊՀ Մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետը:

1981 թ. ավարտել է Մոսկվայի Պետական Համալսարանի Մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետի ասպիրանտուրան եւ պաշտպանել է թեկնածուական դիսերտացիան:

1982-1991 թթ. աշխատել է ԵՊՀ Մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետում՝ որպես գիտաշխատող:

1993-1995 թթ. աշխատել է «Գանձասար» ասպվածաբանական հանդեսում:

2001-ից ծառայել է Ս. Գեղարդավանքում:

2002-2004 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին ձեռամբ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռնադրվել է սարկավագ:

2004-2006 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում՝ որպես հոգեւոր սպասավոր:

2006-2009 թթ. եղել է Ս. Գեղարդավանքի սարկավագ:

2009 թ. հուլիսի 19-ին ձեռամբ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2009 թ. սեպտեմբերից ծառայում էր Կոտայքի թեմի Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցում՝ որպես հոգեւոր հովիվ:

Նոյեմբերի 7-ին, ժամը 17.00-ին Աբովյանի Ս. Ստեփանոս եկեղեցում տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ Հայր Սարգսի հոգու հանգստության համար: Հաջորդ օրը նույն եկեղեցում կատարվեց վերջին օծման արարողությունը:

Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱՒ Տ. ԱՐՍԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԷՐԲԷՐԵԱՆԸ

Նոյեմբերի 16-ի առավոտյան կյանքի 76-րդ տարում վախճանվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Գերաշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանը:

Բազմավաստակ Սրբազան Հոր վախճանը մեծ կորուստ է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նրա հավատավոր զավակների համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագույն հոգեւոր խորհուրդն ու Հայ Եկեղեցու ողջ հոգեւորականաց դասը սգում են բարեհիշատակ Սրբազան Հոր մահը:

Նոյեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատանը տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից մեկի՝ Գերաշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանի հուղարկավորության արարողությունը:

Վաղ առավոտյան Ս. Գայանե վանքում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Սրբազան արարողության ընթացքում հանգուցյալ Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանի աճյունը դրվեց Ս. Խորանի առջեւ եւ կատարվեց Սրբազան Հոր վերջին օծման կարգը: Սրբալույս մյուռոնով օծվեցին Արսեն Սրբազանի ճակատը եւ աջ ձեռքը: Այնուհետեւ՝ Ողջույնի ժամանակ, Մայր Աթոռի միաբանները մոտեցան եւ Արսեն Սրբազանից ստացան վերջին ողջույնը:

Դամբանական խոսք ասաց պատարագիչ Հովակիմ Սրբազանը: Նա անդրադարձավ հանգուցյալ Սրբազանի կյանքին եւ գործունեությանը՝ նշելով, որ Սրբազան Հայրը տասնամյակներ շարունակ անձնուրաց կերպով ծառայեց Հայ Եկեղեցուն՝ իր նկատելի ներդրումն ունենալով մասնավորաբար հայ եկեղեցական երաժշտության բնագավառում, ինչպես նաեւ՝ հովվական ու հասարակական մի շարք այլ ոլորտներում: Ապա Հովակիմ Սրբազանն իր խոսքում ավելացրեց, որ Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանը, ասպվածային նախախնամության առաջնորդությամբ ծառայելով Հայ Եկեղեցու ամենից ծանր՝ խորհրդային կարգերի ժամանակ, կարողացավ իր անկոտրում հավատքի շնորհիվ լավ օրինակ հանդիսանալ բազում հոգեւորականների համար: Խոսքի վերջում Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը Սրբազան Հոր վախճանի կապակցությամբ Հայ Եկեղեցու հոգեւորականաց դասի եւ բարեպաշտ հավատացյալների անունից իր ցավակցությունը հայտնեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. Հայրապետին եւ երջանկահիշատակ Արսեն Սրբազանի հարազատներին:

Իսկ Ս. Պատարագի ավարտին, նախագահությամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի, կատարվեց հանգուցյալ Սրբազանի թաղման կարգը: Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանի աճյունն ամփոփվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատանը:

Հուղարկավորությանը մասնակցում էին Հայ Առաքելական Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, տարբեր թեմերի հոգեւոր սպասավորներ, հավատացյալներ, ինչպես նաեւ Սրբազան Հոր մտերիմները եւ հարազատները:

Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի: